

դնելով վերքի վրայ կամ քսելով նրա շուրջը և կամ դանակով խաշակներով եօժն անգամ ասում են այս աղօթքը.

Աթլաս,

Պաթլաս,

Ալալարա

Բաս բաս:

Մկնատամ.—Մի թղթի վրայ գրում են հետևեալը և դնում մկնատամի վրայ.—

Ամօն ամօն, յալ ամօն էն էն ամօն բրայ բոն, բրայ բոն ամօն.—Ազ, եզ արզ, դատագ, ազ, ազ, եղէզն:

Սյս գրում են առաւելապէս չորեքշաբթի և մանաւանդ «չիք-չորեքշաբթի» (Զատիկի Աւագ չորեքշաբթի) օրը:

Շնճրի յարձակումից ազատուելու համար ասում են.

Յիսուս Քրիստոս աշխարհ եկաւ:

Շուն կար՝ գլուխ չկար:

Օճի խայթոցից ազատուելու համար օձ տեսնելիս ասում են.

Կորիք անիծեալ. կապեալ լինիս Օհան Օձնեցու առաջի անմահ պատարագին:

Մինի սէրը գրաւել ցանկանալով մի փոքրիկ թղթի վրայ գրում են.

Սուրբ Յարոս,

Սուրբ Ամաթոս,

Սուրբ Սալաթոս,

Միբեցուցէք (այսինչին այսինչի) հետ:

Յետոյ հռանկիւնածէ ծալում են, մի շորի մէջ կարում—համայիլ շինում—և միշտ պահում սէրը գրաւել ցանկացողի մօտ և կամ մանր կտորներ անում, լցնում ջրի մէջ և լամցնում նրան, որի սէրը կամենում են գրաւել:

ՄՆՈՏԻԱՊԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Աքաղաղը իմաստուն է, նա իմանում է երկնքի դանդաղների առաջին զարկը և ինքն էլ թռչելու թափահարում, ձայն տալիս:

Սև հաւը խեղդում են և դռան շեմքում թաղում, որ չարը ներս չմտնի:

Եթէ մի ապրանք չարի հանգիպի, օրինակ, մի կողմ հիւանդանոցայ, ինչ տեղ հիւանդանում է, նոյն տեղը մերս են խփում, որ չարը ոչնչանայ:

Հաւի ձուից ճուտ դուրս գալիս կենպը դէն չեն տծում, այլ թելի վրայ շարում են, որպէսզի ճտերն ապրեն և չկոտորուին:

Եթէ մի տան անասուններն սատակում են, նորն ասնելիս տան մաղը և խաշը պտոյտ են տալիս գլխովը, որ մնայ, չսատակի:

Երբ մինից շատ անասուններ են սատակում, վերջին սատակածի գլուխը թաղում են դոմի շէմքում, որ այլևս չսատակեն: Մազերը ստերելիս՝ թափուած մազերը հաւաքում, դնում են պատի խորշում. իսկ ոմանք հաւաքում են մի առանձին քսակի մէջ, որը նոյն մարդու մեռնելիս՝ դազադի մէջ դրուելով՝ հետը թաղւում է, որպէսզի նա միւս կեանքում մազի նեղութիւն չքաշէ: Եղունգները կտրելիս գետնում թաղում են ասելով.

Ղէշնը, դէշնը ըտեղ կաց.

Հերու որ ուզիմ հազիր կաց:

որպէսզի պատրաստ մնայ որ միւս կեանքում կրկին վերցնեն:

Հաւը թուխս դնելիս հաւկիթները դարսում են գդակի մէջ, տանում և մի սնեզամից դարձնում ասելով.

Քոխուալի տակդ եմ անում,

Կենկալի հանիլ պտես:

Յետոյ գդակը դնում են գետնին և իրենք էլ մօտը նստում, որ հաւը նստկան լինի:

Գդալը կրակի մէջ չեն ձգիլ, որպէսզի գայլը չուտէ հորթերը:

Կաթը տաքացնելիս եթէ մինը կրակ ուզէ, կամ չեն տալ և կամ մի կանաչ տերեւ են դնում կաթի վրայ ու ապա տալիս, թէ չէ կաթի բարաքեաթը կերթայ ու կովի պտուկը կը քոսոտի:

Եթէ կովի կաթը արիւնաբխառն է լինում, լաւացնելու յուսով առանց այդ մասին մինին ասելու, ծածուկ կթում են և երեք անգամ նախ իւր գրէնդը (ըռի փափուկ մասը) և ապա կովի ծիծը կծում, և յետոյ կթած կաթը տանում մօսրենու տակ թաղում:

Կովի ստինքսը հիւանդանալիս սև խլուրդի (բորելխամուկ) առաջին ոտը դրամի վրայ դրած կարում են և նրա չոր ճանկը երեք առաւօտ քսում ստինքսին, որ լաւանայ:

Նոր գնած անասունը օջախի մօտ են տանում և ոտներին շուր ածում, որ չը կորչի:

Հորթի գլխին աղաքար կամ հասարակ քար են քսում, որպէսզի գլուխը քարի պէս ամուր լինի:

Մնացին փոխ տալիս մի գրաւական են վերցնում, որպէսզի

երևայ, որ խնոցին զարձեալ իրենց մօտ է, ապա թէ ոչ՝ բարաքեաթը կերթայ:

Մազ, մերան, խաշ, սերմ փոխ չեն տալիս, որպէսզի բարաքեաթը չգնայ:

Որպէսզի մեռելը շատանայ՝ քահանան եկեղեցու կողպէքը պէտք է կրծէ, կամ գերեզմանատանը թաւալուի և կամ ձեռի գաւազանը քաշ տայ:

Հրացանի վրայով թոյլ չեն տալիս անցնելու, որպէսզի 1) հրացանի մեղքերը անցնողին չանցնի. 2) հրացանի գնդակը չծռուի ու այլևս որսին չգիպչի և 3) հրացանը «չկոխուի», այսինքն չփչանայ:

Կշեռքի վրայից էլ թոյլ չեն տալիս անցնելու, մեղք է, ստուժ են, անցնողը կը մեռնի:

Հաց թխելիս խոնչի վրայ մնացած ալիւրը յետ չեն վերցնում, այլ ածում են թոնիքը անտէր մեռելներին յիշատակի համար:

Մաղը առանց գրաւականի չեն թոյլ տալիս որ գիշերով դուրս տանին:

Փռնչտալիս խաչակնքում են, որպէսզի սատանան իրենց փորը չմանի¹⁾:

Երեկոները բարձը թափ են տալիս, որպէսզի չարը միջից դուրս գայ:

Խորոված անելիս եթէ շամփուրները աջ ու ձախ դնեն՝ անասուններից կըստատակեն:

Փիծեղը, որ նորատի աղէն ուտէ, թագի տակին կըռնանայ:

Եթէ չամուսնացած աղջիկը կամ տղան կաթի տկուցքը քերէ՝ հարսանիքի օրը ձիւն կըգայ, իսկ եթէ կերակուր ուտելիս ամանը լաւ մաքրէ՝ ապագայ ամուսինը գեղեցիկ կը լինի:

Շորերը թարս չեն ծալում, թէ չէ տէրը կըմեռնի:

Թաթակիշը միշտ մաքուր լուանում են, որովհետեւ հաւատում են, որ նոյն երեկոյ նա Երուսաղէմ պիտի գնայ ուխտ անէ: Եթէ խմոր լինի վերան՝ կը գանգատուի:

Սաբից վերադառնալիս պանրի մերանը թազում են, որ սուրբ է, սուրբ կենայ:

Մերանը ուրիշից ուղելիս պէտք է մի գրաւական, օրինակ, մի բաժնաչափ կաթը տան:

Եթէ կիրակի օրը ստիպուած լինին եղունգ կտրել, պէտք է

¹⁾ Եւ բացառութիւնը մի թուրք լսելով, ասել է թէ ապա մեր փորը ինչի չէ մտնում, չէ որ մենք երբէք չենք խաչակնքում:

— Ձեր փորը սառանի տեղակիտ տանն է, պատախտան է հայը, մտնում էլ է, դուրս էլ է գալիս, միայն օստորակն բան լինելով դուր չէք իմանում:

օջախում թաղեն, պահեն, որովհետև միև աշխարհում կը պահանջեն:

Երկուշաբթի օրը դրամ փոխ չեն տալ, որպէսզի ամբողջ շաբաթ նոյնը չկրկնուի:

Չորեքշաբթի և ուրբաթ օրերը ձև չեն անում, ապա թէ ոչ կայրուի:

Ձմեռնադուսին, երբ արեւի շողերը տունն է ընկնում, կանայք խաշից կարում են և տանում պատից կացնում և երբ չորանում է՝ պահում են, որ ամառը, երբ արեւը հնձուորին այրէ, նրան քսեն ու առողջացնեն:

ՆՃԱՆՈՒՈՐ ՏՕՆԵՐ

Նոր-տարի.—Տարեմտին (դեկտ. 31-ին) ամէն մի տուն լուացք է անում, հաց թխում, (թէկուզ շատ էլ հաց ունենայ), փորրիկ, մարգակերիւղ հացիկներ պատրաստում՝ աչքերի, բերնի և կրծքին դրած ձեռքերի վրայ քիչմիշներ խրելով: Սրանց կոչում են Ասիլ-ըասիլ և տալիս են երիտաների ձեռքը: Ջաւախքում սրանց միջոցով անուող գուշակութիւններն այստեղ յայտնի չեն: Քացի սրանից, շինում են նաև կլկալ, կամ ղուլաժ—կլոր բլիթ, մէջ տեղը ծակ: Սրանք, որ իբր հացի հոր են ներկայացնում, նոր տարու օրն անց են կացնում գոմէշի և եղան եղջիւրին, որպէսզի այդ տարին հորը լցուի ցորենով:

Հացը թխելիս, հետեւեալ օրուայ համար պատրաստում են կերակրներ, որոնց մէջ լինելու է անշուշտ լոբի և լոբիջուր, այնպէս որ իրենք էլ ասում են, թէ նոր տարին չի գալ առանց լոբու:

Երբ հացը թխում, աւարտում են, վերջի երեք գունտի վրայ նշաններ են անում, յատկացնելով մինը ցորենի, երկրորդը՝ դարու և երրորդը՝ հաճարի նոր տարուայ բերքին և ձգում թոնրի մէջ, կրակի վրայ, ապա հանում և նայելով թէ որը որչափ է ուռել, բերրի առատութեան վերաբերութեամբ գուշակութիւններ անում:

Փորը ի շատէ ունեոր տներում էլ գողինաղ են պատրաստում մեղրով ընկոյզից և նուշից:

Նոր նոր վերանում է այն, թերեւս զբաղաշտական կրօնից